



**«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն**

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail:

[info@hetq.am](mailto:info@hetq.am), [hetq@hetq.am](mailto:hetq@hetq.am), URL : [www.hetq.am](http://www.hetq.am)

06.04.2022թ.

**ՀՀ Արմավիրի մարզպետ  
Պարոն Էդվարդ Հովհաննիսյանին**

**«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի  
«Հետք» թերթի լրագրող  
Գրիշա Բալասանյանից  
Հեռ. 093-82-26-80, e-mail: [grisha.balasanjan@hetq.am](mailto:grisha.balasanjan@hetq.am)**

Հարգելի պարոն *Հովհաննիսյան*,

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով, խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծած պատերազմի հետևանքով Արմավիրի մարզում քանի՞ արցախցի է ժամանակավոր բնակվում: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների և բնակավայրերի:***

2. Արցախի ո՞ր համայնքներից են Արմավիրի մարզ տեղափոխվել արցախցիները: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ Արցախի համայնքների, որտեղից եկել են՝ նշելով նաև այդ համայնքներից տեղահանվածների թիվը:***

3. Ի՞նչ բնակելի հատվածներում, կացարաններում կամ վայրերում են ապրում Արմավիրի մարզում գտնվող արցախցիները: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների՝ նշելով բնակելի տարածքի տեսակը, յուրաքանչյուրում ապրողների թիվը (տուն, դպրոց, մանկապարտեզ եւ այլն):***

4. Համայնքային ենթակայության տարածքներում ապրող արցախցիների ծախսերը, այդ թվում էլեկտրաէներգիայի, գազի, ջրի և այլն, ո՞վ է հոգում, ի՞նչ միջոցներից: Ի՞նչ դժվարություններ են առաջանում:

5. Նախկինում չբնակեցված կամ դատարկ տներում ապրող արցախցիների ծախսերը, այդ թվում էլեկտրաէներգիայի, գազի, ջրի եւ այլն, ո՞վ է հոգում, ի՞նչ միջոցներից: Ի՞նչ դժվարություններ են առաջանում:

6. Կա՞ն արցախից ժամանակավոր տեղափոխվածներ, ովքեր ցանկություն են հայտնել մշտապես բնակվել մարզի տարածքում: Եթե այո, ապա այդ ուղղությամբ ի՞նչ քայլեր է ձեռնարկել մարզպետարանը, ի՞նչ ծրագրեր կան նման անձանց համար:

7. Արցախից Արմավիրի մարզ տեղափոխված անձանցից քանի՞սն ունեն աշխատանք մարզի տարածքում և ինչպիսի աշխատանք: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ աշխատողների թվի՝ նշելով աշխատանքի բնույթը, պաշտոնը:***

8. Արդյո՞ք իրականացվել է կարիքների գնահատում, թե մարզում ապրող արցախցիների համար որոնք են առաջնահերթությունները, ինչի կարիք ունեն և ինչ թիրախային աշխատանքներ պետք է իրականացվեն այդ ուղղությամբ: ***Եթե այո, ապա տրամադրել ուսումնասիրության արդյունքները:***

***Կանխավ շնորհակալություն***

***Դիմող՝ Գ. Բալասանյան***

